Ալեքսանդր Ծատուրյան

Մրջյուններ և խլուրդ

Գարնան ջերմ օրին մայր-երկրի երես
Ջերմ գործի ելան արի մրրջյուններ.
Վազեցին հա՛ դեն, վազեցին հա՛ դես,
Որպես ժրրաջան, անխոնջ մշակներ:

Եվ կարճ միջոցում, պարտիզի խորքում
Կանգնեցրին մի տուն հողաշեն թրմբիկ,
Եվ ապրում էին ամենքն այդ շենքում,
Ասես, մի՛ սիրով կապված ընտանիք:

Բայց մի օր (ավա՜ղ, երկրի երեսից
Չարն է անպակաս) խրոճուկ մրջյուններ
Հոգնած, ուժասպառ տուն գալով գործից,
Տեսան տունն իրանց քանդված ու ավեր…

Ստորերկրյա ճամփով, թաքուն գողի պես,
Սուսիկ փորելով սիրուն շենքի տակ,
Լույս-արևն ատող խլուրդն էր այդպես
Խեղճ մրրջյունների ավերել վաստակ:

Լույսի մշակնե՛ր, երբ կյանքի գարնան
Գործի եք ելնում, դուք մի՛ մոռանաք,
Որ մեզնում նույնպես խլուրդներ շա՜տ կան

Թաքուն փոս փորող ամեն գործի տակ…